ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝**

Աննա **Շահնազարյան**	Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ
Անահիտ **Հարությունյան**	Հետազոտությունների և զարգացման վարչության պետ
Դիանա **Քարազյան**	Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ֆրանսիայի Հանրապետություն, Ստրասբուրգ, 2023 թվականի հոկտեմբերի 16-ից 19-ը

3. **Հրավիրող կողմը՝**
   Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

4. **Գործուղման նպատակը և քննարկված թեմաները՝**
   Երկօրյա գործուղման ընթացքում (հոկտեմբերի 18-19) պատվիրակության անդամներն աշխատանքային տարբեր հանդիպումներ են ունեցել Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) քարտուղարության, Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) քարտուղարության իրավաբանների հետ:

   ❖ ***ԽԿԿ***

   Պատվիրակության անդամները ԽԿԿ քարտուղարության ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ քննարկեցին ԽԿԿ դերից և մանդատից բխող գործառույթները, տարբեր երկրների փորձը, ինչպես նաև 2021 թվականի Հայաստան կատարած այցի շրջանակում արձանագրված հիմնական խնդիրները:

   ❖ ***Վենետիկի հանձնաժողով***

   Պատվիրակության անդամները Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում քննարկեցին Վենետիկի հանձնաժողովի դերը անդամ պետություններում իրականացվող դատաիրավական բարեփոխումների համատեքստում: Պատվիրակության անդամները ծանոթացան Վենետիկի հանձնաժողովի հիմնական գործառույթներին, ինչպես նաև նրանց ներկայացվեց

Վենետիկի հանձնաժողովի կայքէջում առկա հիմնական որոնողական գործիքները, որոնք կարևորվում են անդամ պետություններում տեղի ունեցող շարունակական օրենսդրական բարեփոխումներին և բարձրագույն դատարանների նախադեպային իրավունքի տեղեկագրերին հասանելիություն ունենալու համատեքստում:

- ***Եվրոպական դատարանի քարտուղարություն***

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Եվրոպական դատարանի կողմից 2019 թվականից ներդրված գործերի քննության նոր ընթացակարգերի առանձնահատկությունները: Մասնավորապես անդրադարձ կատարվեց գործերի արագացված կարգով քննությանը և այդ կապակցությամբ կառավարության գործողություններին: Եվրոպական դատարանի քարտուղարությունը ներկայացրեց Կոնվենցիայի իմաստով ներպետական արդյունավետ միջոցներին ներկայացվող չափանիշները: Քննարկվեցին նաև հաշտության համաձայնության կնքման շրջանակներում Եվրոպական դատարանի դերակատարության առանձնահատկությունները: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին գործերի քննության նոր ձևաչափերի առանձնահատկությունները:

Ստորագրությունը, ամսաթիվը

24.10.2023

24.10.2023

24.10.2023